

բարոյականը կ'ըմբռնէ ըստ մարդու բա-
նաւոր ազատ դատողութեան, այդ ազա-
տութեան մէջն է որ Մէֆիսթոյ կը զեղծանի:

Անկարելի է որ բնագանցական գիտու-
թեանց հմուտ աստուածաբան վարդապետը
համոզուի որ Ֆաուսթի վարդապետութիւնը
ամբողջութեամբ հիմնուած ըլլայ Աւետա-
բանին վրայ: Ամէն պարագայի, առողջ
դատողութեան տէր ընթերցողը Ֆաուսթէն
կրնայ շատ օգտուիլ՝ եթէ Մէֆիսթոյի լա-
րած ծուղակէն միշտ հեռու պահէ ինքզինքը:

Սիրուն է կէսօթի Ֆաուստի գեղարուես-
տական այդ քանդակը, զմայլելի երբ կու-
նոյի բերնով կ'երգէ ան:

ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ

ԱՐՄԷՆ-ԵՐԿԱՍԹ. — «Կուզիկ Պետոն» (հէքեաթ).
հրակ. «Սահակ-Մեսրոպ». տպ. Գահիրէ, 1933.

Կուզիկ Պետոն առասպելական միջոց-
ներով կը կորսնցնէ իր կուզը: Հարուստ
մը իր աղջիկը Պետոյի հարսնութեան կը
խոստանայ, եթէ ըսէ թէ ինչպէս ան իր
կուզը կորսնցուցած է. և Պետոյ կը պատ-
մէ. «Հինգշաբթի օր մըն էր, բաղնիք գացի,
լուացուեցայ, չեմ գիտեր ի՞նչ կար ջուրին
մէջ, կուզս հալեցաւ շաքարի պէս»:

Նոյնը կը փորձէ հարուստ մարդը, բաղ-
նիքին մէջ, ջրանոյշ գեղեցիկ աղջիկնե-
րուն երգը կը լսէ, ու երբ անոնց սխալը
կը շտկէ, անոնք կը վերաւորուին, եւ ի
պատիժ՝ կուզ հարուստին վրայ Պետոյի
կուզն ալ կը բարդեն. ամօթահար հա-
րուստը բաղնիքէն դուրս կ'ելլէ, Պետոյին
չուզեր տալ իր աղջիկը:

Սակայն այդ անկարելի էր, Պետոյ
յանձն կ'առնէր կրկին կուզ ունենալ՝ բայց
չգրկուիլ այդ հարուստին աղջիկէն. աղ-
ջիկ և մանչ զիրար սիրած էին, հրաշքով
իրարու կապուած էին. անոնք զիրար կ'առ-
նեն: Պետոյ ալ լեւս կուզ չունէր, երիտա-
սարդ իշխանի պէս գեղեցկացած փեսայ
կը դառնար, և հրեշտակի պէս գեղեցիկ
աղջիկին կը փափսար աւանջէն.

«Սուրբ իրաւ է
իրաւը սուտ է

Գուն ինծի կ'առնես
էս բան չեմ առնէր
Այսօր կ'երակի
Վաղը չես զիտեր
Ի՞նչ կը պատահի
Եղինկ կը դառնաս
Ես որսորդ տղայ
Սուր նետ կ'արձակեմ
Սիրտը կ'արիւնեմ
Եւ դուն կը մնաս
Կը վերածընիս
Իմ սրտիս վրայ»:

Փեսան այնքան ուրախացեր է որ խելքը
թռուցեր, իր երգածին կէտադրութիւնն է
մոռցեր: Արսէն Երկաթ զգալիօրէն կը յա-
ռաջադիմէ, իր ամէնէն յաջող գրութիւն-
ներէն մէկն է այս հէքեաթը, ուր յարգած
է պահանջուած գրական կանոնները: Նիւ-
թը պարզութեան մէջ պերճ է: Իմաստա-
սիրական, բարոյական խրատները ալ ա-
ւելի գնահատելի ըրած են այս հրապու-
րիչ հէքեաթը:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՊԱՐ-
ՏԻՋԱԿՑԻՈՅ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԱՐ-
ԿՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԻՋԱԿԻ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ:

Արարեալ է Տ. Կարապետ Քահանայէ Տ. Գրիգորեան.
Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1933, էջ 102.

Չկայ գեղածիժաղն Պարտիզակ: Մեծ
աղէտին՝ ան ալ միւս հայաշատ կեդրոն-
ներուն նման հիմնայտակ կործանեցաւ
հայոցս համար: Կ. Պոլսոյ կից այս ա-
ւանը և Նիկոմիդիոյ նշանակելի հայկական
գաղութին մանրակրկիտ պատմութիւնը
չգրուեցաւ ժամանակին, իսկ այժմ գոնէ
տեղական յիշատակարաններով վաւերա-
ցեալ հրատարակութիւն մը՝ ալ շատ ուշ
է, նոյնիսկ անկարելի: Պարտիզակի եւ
ընդհանրապէս Նիկոմիդիոյ, Կ. Պոլսոյ հետ
ունեցած մերձաւորութիւնը, և Պարտիզակի
գրագէտ հայորդիներ ունենալը մեծ ազդակ
մըն էր այդ գաւառին և աւանին կառա-
րեալ պատմութեան պատրաստութեան հա-
մար: Սակայն դժբախտաբար ատիկա չկա-
տարուեցաւ, թէեւ Մինաս Գ. Գասապեան

(Պարհատ), Պոսթոնի «Հայ Վաստակ»
առեւտրական թերթի խմբագիր (Վերա-
ծին) 1913ին Ազատամարտի տպարանէն
հրատարակեց ուսումնասիրութիւն մը՝ Հա-
յերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, ուր 311
էջերու մէջ գոհացուցիչ պատկեր մը կը
տրուի այդ գաւառին կարեւոր հայութեան
մասին: Ուրեմն բնական է որ Պարտիզակի
անցեալին նայող ամէն տեսակ յիշատա-
կարաններու հրատարակութիւնը մեծ հե-
տաքրքրութեամբ կարդացուի այդ գաւառով
հետաքրքրուողներուն կողմէ:

Յառաջաբանէն կ'իմանանք թէ Վկա-
յարանութեանց եւն. հեղինակը, Տ. Կա-
րապետ քննյ. Տ. Գրիգորեան, է մայրենի
պապը Յառաջաբանը գրողին՝ և զըջոյկիս
հրատարակիչ՝ Թորգոմ ս. Գուշակեանի,
Երուսաղէմի այժմու պատրիարքին:

Յառաջաբանէն վերջ նահատակին Յով-
հաննէս Փիրէնեան սրբակրօն երիտասար-
դին տապանագիրը կը տրուի, 1838 Մայիս
1 թուակիր: Յետոյ կու գայ պատմաբան
Լաւառապետ Լոյս Վկայի Գրիգորի
սրբոյն Յովնանեոս Պախլաճիցոյ (էջ 1 -
24), որուն կը յաջորդէ նոյնը՝ ուսանաւոր
ձեւով կատարուած, որուն քառեակներուն
սկզբնատառերը կը կապեն «Ի ՏԵՐ ԿԱՐԱ-
ՊԵՏ ՔԱՀԱՆԱՅԻ ՆՈՒԱՍՏԷ Ե ԲԱՆՍ ՊԱՏ-
ՄՈՒԹԵԱՆ ՅԱՂԱԳՍ Ս. ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ
ՆՈՐ ՎԿԱՅԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐ Ի ՊԱՐՏԻՋԱԿ
ԳԵՂ.Ձ Ի ՆԱՀԱՆԳԻՆ ՆԻԿՈՄԻԴԻՅ»:

Վկայա-
բանական այս երկու կտորներն ալ առ-

նուած են Սաղէմի հայաւանքին հաւա-
քածոյէն:

Էջ 43 էն սկսեալ մինչեւ էջ 52 Վը-
կայութեան ծանօթութիւնները, անշուշտ
Թորգոմ սրբազանի զըջէն:

Հատորիկիս երկրորդ մասը Պարտիզակի
պատմութիւնն է՝ Տէր Կարապետի զըջէն,
գրուած 1831ին: Սակայն ասոր օրինա-
կութիւնը՝ ըստ Յառաջաբանին իսկ ծա-
նօթութեանց՝ կը պարտինք մեղուաշան
Վենետիկեան Մխիթարեան Հ. Վարդան
Վ. Հացունիի, որ ժամանակին Պարտի-
զակի մէջ օրինակեր է Տէր Կարապետի
այդ գրութիւնը և հետը բերեր է Վենե-
տիկ: Թորգոմ սրբազան այսպէս անփո-
խարինելի երջանկութիւնը կ'ունենայ իր
նախնիին գրութիւնը ձեռք բերելով եւ
արժանապէս հրատարակելով:

Պարտիզակի հիմնարկութեան մասին
տրուած տեղեկութիւններն անբաւական
են: Իսկ հին եկեղեցւոյն հիմնարկութեան
մասին երկար կը խօսուի:

Տէր Կարապետ քահանայի այս գրու-
թիւնը ծանօթ է եղած Մ. Վերածինի
(Մինաս Գ. Գասապեան) իր Հայերը Նի-
կոմիդիոյ գաւառին մէջ գործին մէջ:

Այս հատորիս վերջին մասը կը փակուի
էջ 88էն սկսեալ երկրորդ ծանօթագրու-
թեամբ մը՝ հրատարակիչէն:

Տպագրութիւնը մաքուր, թուղթը լաւ
և կազմը կոկիկ:

Ուրիշ թաղանթ

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

ՔԱՆԻ ՀՈԳԻ ԵՆՔ ՀԱՅԵՐՍ

Կէս տարի առաջ որոշած էի զանազան
ազգային հաստատութիւններու զիմելով,
հարցարաններու միջոցաւ փնտռել հայու-
թեան ներկայ թիւը: Այս նպատակով շուրջ
երկու հարիւրի չափ նամակներ ուղարկե-
ցի աշխարհի բոլոր վայրերը, ուր հայու-
թեան գոյութիւնը կը գուշակէի և ներփա-
կելով նամակներուս հետ զանազան հար-

ցարաններ, խնդրեցի մէն մի վայրէ ճշ-
գրիտ տեղեկութիւններ, որ կարենամ մեր
ազգին ներկայ թիւը ըստ կարելւոյն մին-
չեւ գոնէ 90-95% ճշգրտութեամբ հաստատել:

Նախ և առաջ քիչ շատ կոտորած սրտով
ստիպեալ եմ արտայայտուիլ որ, շատեր
խուլ և համը միացին հարցումներուս. նա-
մակներուս զրեթէ կէսը բոլորովին առանց

պատասխանի մնաց : Քաղաքական թեր-
թերու խմբագրապետութիւնները , որոնց
ուղղուած էր իմ նամակներուս մեծ մասը ,
գրեթէ ոչինչ պատասխանեցին . կարծեմ
թէ օրուան քաղաքական , կուսակցական
հարցերով , եռագոյնի և ոչ-եռագոյնի կա-
րեւորագոյն հարցերով չափազանց զբա-
ղած ըլլալուն պատճառաւ էր , որ արժանի
չգտնուեցայ իմ ազգագրուտ աշխատութեանս
համար գոնէ երկտող մը ստանալ : Կրօնա-
կան հաստատութիւններն ու դպրոցական
վարչութիւններն են , որոնց կը պարտիմ
ստացած պատասխաններուս մեծագոյն մա-
սը մինչ հայկական թերթերու խմբագրա-
պետութիւնները նոյնիսկ տեղային մամու-
լին մասին տուած հարցումներս անգամ
անպատասխան թողին :

Խորին շնորհակալութիւն կը պարտիմ
Երուսաղէմի Ամեն . Թորգոմ պատրիար-
քին , որ բոլոր հարցումներուս բարեհաճե-
ցաւ մանրամասն լուսարանութիւններ տալ :
Շատ ազնիւ գտնուեցաւ Վենետիկի Միսի-
թարեան Միաբանութիւնը , « Բազմալէպ »-ի
խմբագրապետ Հ . Եղիա Փէշիկեան , որ
կրկին եւ կրկին անգամներ ուղղած նա-
մակներուս պատասխաններն առանց ու-
շացնելու տուաւ , շատ օգտակար տուեալ-
ներ հասցնելով ինձ : Նոյնպէս Վիեննայի
Միսիթարեան Միաբանութիւնը , Դաւրէթի
հայ առաջնորդարանը , Եգիպտոսի հայ
առաջնորդութիւնը , Պուլկարահայոց մա-
սին Հ . Եղիշէ Սրապեանը , Յունաստանի
մասին Քոքրինիայի « Նաւասարդ » հայ երկ-
սեռ միութեան քարտուղարը , Deutsch-
Armenische Gesellschaftի վարչու-
թիւնը , « Masis » անգղիերէն լեզուով հրա-
տարակոող թերթին խմբագրապետ Պրն .
Սաֆրաստեան և ղեռ ուրիշներ , որոնց իմ
խորին շնորհակալութիւններս յայտնած
եմ արդէն :

Կ'ուզէի հասկցնել , որ ճշգրիտ և ան-
սխալ մարդահամարի մը անհրաժեշտ հար-
կը ունինք և պէտք է գիտնանք , պէտք
է ճանչնանք մեր ազգին ներկայ կացու-
թիւնը : Կը յուսամ որ զազափարս հաս-
կըցողներ եղան մէկէ աւելինք և ամէն մի

երկրի , ամէն մի գաւառի մէջ օր առաջ
պիտի գտնուի ոգեւորեալ հայ մը , որ ճիգ
թափէ իր գաւառին , իր երկրին հայու-
թեան մասին ինչ որ կարելի է գիտնալ
իրարու քով բերելու :

Թէ այսպիսի մարդահամար մը ինչքան
կարեւոր է , կը հասկնանք պարզ օրինա-
կով մը . Եգիպտոսի մէջ պատկառելի հայ
զանգուած մը կ'ապրի . այս երկրի հայու-
թեան թուին մասին տասնէ աւելի հասցէնե-
րու ղիմեցի և ստացած պատասխաններս 40
հազարէն մինչեւ 22,000-ի կ'իջնեն : Կարգ
մը հաւաստումներ ընելով կրցայ մօտենալ
ստոյգ իրականութեան , զորս հետեւեալ
տողերուս մէջ կը ծանօթացնեմ , խնդրելով
ամէն մէկ ազգայինէ , որ եթէ իմ տը-
ւեալներուս մէջ կարեւոր սխալ մը տեսնէ ,
նամակով մ'իմացնէ , նոյն ժամանակ ինձ
հասցնէ աւելի ստոյգ տուեալները :

(Հասցէ . — Dr. E. Hovhannessian
Gödöllo, Hongrie)

Ահա թէ քանի հոգի ենք .

Ա.

Մեծ , միազանգ քանակութիւններով ,
իրարու մօտ կը գտնենք հայեր

1) Հայաստան	845. 000
2) Վրաստան	325. 000
3) Ազրբայէյճան	300. 000
4) Կովկասի միւս մասե- րուն մէջ	40. 000

Ընդհանուր գումար 1. 510. 000

այսինքն 1¹/₂ միլիոնէ աւելի հայ իրարու
մօտ , որ ազգի մը գոյութիւնն ապահովե-
լու յարմարութիւնը կընայ ունենալ եւ
հիմն ըլլալ ապագային աւելի խոշոր հայ
զանգուածին :

Բ.

Եւրոպական երկիրներու մէջ :

1) Անգլիա	1. 600
2) Ֆրանսա	64. 000
3) Պելճիգա	2. 200
գումար	67, 800

	(Վոխադրելով)	67. 800
4) Իտալիա	700	
5) Գերմանիա	300	
6) Չեխոսլովակիա	400	
7) Աւստրիա	250	
8) Հունգարիա	60	
9) Ռումանիա	24. 000	
10) Պուլկարիա	30. 000	
11) Եւրոպական թուրքիա	500	
12) Չեխոսլովակիա	100	
13) Յունաստան	26. 000	
14) Կիպրոս	5. 000	
15) Եւրոպական թուրքիա	60. 000	
16) Եւրոպական Ռուսիա	80. 000	

Ընդհանուր գումար 295. 110

Բաց ի թուրքիոյ , Յունաստանի , Պուլկա-
րիոյ և Ռումանիոյ հայերէն , միւս բոլոր
գաղութները , նոյնիսկ Ֆրանսայի 64. 000
հայերը դպրոցներու տեսակէտով , հայ լե-
զուի , հայ մշակոյթի ուսուցման տեսակէ-
տով շատ ցաւալի վիճակի մէջ կը գըտ-
նուին և շուրջ դար մը վերջ պիտի յիշուին
թէ հայ եղած են , բայց դադրած հայ ըլ-
լալէ : Դպրոցներու տեսակէտով լաւագոյն
վիճակի մէջ են Պուլկարիոյ հայերը , ուր
կառավարութիւնը հայոց հանդէպ միշտ
ազնիւ գտնուած է : Լեհաստանի և Հուն-
գարիոյ հայերը բոլորովին օտարացան ,
հայերէն չգիտցող հայութիւնը հաշուի չեմ
առած :

Գ.

Ասիոյ մէջ :	
1) Պաղեստին	3. 300
2) Սիրիա և Լիբանան	130. 000
3) Ասիական թուրքիա	40. 000
4) Իրաք	40. 000
5) Պարսկաստան	75. 000
6) Հնդկաստան , Ճաւա եւն	3. 000

Ընդհանուր գումար 291. 300

Դպրոցական և եկեղեցական տեսակէտով
Ասիոյ մէջ լաւագոյն դերի մէջ կը գըտ-
նուէին Պարսկաստանի հայերը ղեռ մինչեւ
երէկ . այսօր է որ ճգնաժամ մը տիրած
է . յուսանք որ հորիզոնը շուտ պարզուի :
Նոյն տեսակէտով գոհացուցիչ կընան սե-
պուիլ — գոնէ առ այժմ — Սիրիոյ հա-
յերը , որոնց տնտեսական կացութիւնը
ղեռ ողբալի է :

Բարձր Հայքի մէջ ոչ հայ եկեղեցւոյ
զանգակներ կը հնչեն , ոչ ալ մարդ կըր-
նանք գտնել , որ այդ զանգակին ձայնին
խաչ մը հանէ : Այդ աւանդական լեռնե-
րուն և դաշտերուն մէջ լռած է հայ խօսքը :

Դ.

Արիւրիկի և Ամերիկայի մէջ :

1) Եգիպտոս	25. 000
2) Հաւէշիստան	1. 500
3) Հիւսիսային և հարա- ւային Ամերիկա	120. 000

Ընդհանուր գումար 146. 500

Հայութեան ընդհանուր գումարը 1934
-ին : 2. 242910, կըլոր թիւով 2¹/₄ միլիոն .

Ձանազան գաղութներու մասին ստացած
նամակներս , տեղեկութիւններս յիշաւ մը
կազմելու կոչուած են և կը փափաքէի
այդ դիւանը ճոխացնել , անպակաս դար-
ձընել : Գաղութներու ներկայ վիճակին հա-
ւաքած տեղեկութիւններս մաս կը կազմեն
Հայ ազգի մասին պատրաստած և քիչ օրէն
հրատարակուելիք բաղադրի մը . այս պատ-
ճառաւ ջանացի որ տեղեկութիւններս ան-
սխալ ըլլան :

ՏՕԲԹ . ԵՂԻԱ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ